

ՀԱՐԿԱՀՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

—

Տարւոյս վերջերը առանձին յայտարարութեամբ հրատարակեցինք թէ այսուհետեւ մեր ամսագիրը ամիսը մէկ անգամ պիտի ելնէ երեք թերթով, ինչպէս երկու տարի առաջ. բայց յետոյ քանիմի բարեսէր բաժանորդաց յորդորանոքը որոշեցինք որ զանազան եկեղեցական եւ քաղաքական հարկաւոր տեղեկութիւնք աւելնան ամսագրոյս մէջ, ուստի չորս չորս երես ալ աւելցընեմք իւրաքանչիւր տետրակին վրայ. որով երեք թերթի տեղինէ ամէն ամիս չորս ամբողջ թերթ՝ բաց իկողքէն, զոր նոյնպէս որոշեցինք գունաւոր թղթի վրայ տպագրել:

Յայտնի բան է որ այս փոփոխութեամբ ամսագրոյս տպագրութեան ծախքը մէկ կողմանէ պիտի ծանրանայ գալ տարի. այսու ամենայնիւ յոյս ունիմք որ բաժանորդաց բազմանալովը կարողանամք ծախքին տակէն ելնել. եւ այս բաւական միսիթարութիւն է մեզ առ այժմ: Կուգայ անշուշտ այն ժամանակն ալ, թիրում լրագիր եւ օրագիր հրատարակելը կրառնայ մեր ազգին մէջ եւս նաեւ նիւթապէս շահաւէտ աշխատութիւն. բայց մեք գոհ պէտք է լինիմք՝ եթէ այն ժամանակին շուտով հանելուն կարողանամք օգնել՝ մեր աշխատասիրութիւնը հետ կատարելագործելով եւ ընթերցասէր բաժանորդաց ազնետէ կատարելագործելով: — Կարծեմք թէ այս պէտք է լինի եւլի օգտակար ընելով: — Կարծեմք թէ այս պէտք է լինի նաեւ միւս ազգային օրագրաց ջանքն ու աշխատութիւնը, որպէս զի առանց վհատելու առաջ տանին շատ տարիներով սյալիսի ազգաշահ ճեռնարկութիւնները: